

Հաստատում եմ
Երևանի Հախմատի ֆեդերացիայի
փոխնախագահ **Ն. Քալանթարյան**
06.02.2018թ.



Երևանի 2018թ.-ի շախմատի պատանեկան առաջնության կանոնադրություն

Ժամկետները՝ 17-26 փետրվարի 2018թ. խաղերի սկիզբը՝ 15:00-ին:

Ժամակարգը՝ 90-ական րոպե մինչև պարտիայի ավարտը, յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած 1-ին քայլից:

Անցկացման վայրը՝ բոլոր մրցաշարերն անցկացվելու են Հայաստանի շախմատի ակադեմիայում:

Հասցե՝ ք. Երևան, Շնչենկո 34:

Առաջնությունն անցկացվելու է 7 առանձին խմբերով:

Մինչև 8 տարեկան պատանիների մրցաշար:

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 4-րդ մարզական կարգի մեկ բալ ունեցող այն շախմատիստները, ովքեր ծնվել են 2009թ.-ի դեկտեմբերի 31-ից հետո:

1-ից 5- րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2018 թ. մինչև 10 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

Մինչև 10 տարեկան պատանիների մրցաշար:

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 2-րդ մարզական կարգ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2007թ.-ի դեկտեմբերի 31-ից հետո, ինչպես նաև կիսաեզրափակիչ մրցաշարից իրավունք ստացած 30 շախմատիստներ:

1-ից 23- րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2018 թ.-ի մինչև 10 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

Մինչև 12 տարեկան պատանիների մրցաշար:

Մասնակցելու իրավունք ունեն 1-ին մարզական կարգ և 1-ին կարգի բալ ունեցող այն շախմատիստները, ովքեր ծնվել են 2005թ.-ի դեկտեմբերի 31-ից հետո, ինչպես նաև կիսաեզրափակիչ մրցաշարից իրավունք ստացած 25 շախմատիստները:

1-ից 20- րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2018 թ. մինչև 12 տարեկանների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

Մինչև 14 տարեկան պատանիների մրցաշար:

Մասնակցելու իրավունք ունեն 1-ին մարզական կարգ ունեցող այն շախմատիստները, ովքեր ծնվել են 2003թ.-ի դեկտեմբերի 31-ից հետո:

1-ից 18- րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2018 թ. մինչև 14 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

Մինչև 16 տարեկան պատանիների մրցաշար:

Մասնակցելու իրավունք ունեն 1-ին մարզական կարգ ունեցող այն շախմատիստները, ովքեր ծնվել են 2001թ.-ի դեկտեմբերի 31-ից հետո:

1-ից 14- րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2018 թ. մինչև 16 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

Մինչև 10 տարեկան աղջիկների մրցաշար:

Մասնակցելու իրավունք ունեն ցանկացած մարզական կարգ ունեցող այն շախմատիստուհիները, ովքեր ծնվել են 2007թ.-ի դեկտեմբերի 31-ից հետո, ինչպես նաև 2009թ.-ի դեկտեմբերի 31-ից հետո ծնված 4-րդ կարգի 1 բալ ունեցող շախմատիստուհիները:

Այս մրցաշարից 30 մասնակիցներ ,որոնցից առնվազն 5-ը ծնվել են 2009թ.-ի դեկտեմբերի 31-ից հետո, իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2018 թվականի մինչև 10 տարեկան աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

Մինչև 12 տարեկան աղջիկների մրցաշար:

Մասնակցելու իրավունք ունեն ցանկացած մարզական կարգ ունեցող այն շախմատիստուհիները, ովքեր ծնվել են 2005թ.-ի դեկտեմբերի 31-ից հետո:

1-ից 25-րդ հորիզոնականները զբաղեցրած մասնակիցներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2018 թվականի մինչև 12 տարեկան աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին: